ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 հունվարի 2019թ. թիվ 26-Ա

ՎԱՆԱՁՈՐԻ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱՆԵՐՈՒՄ ԳՈՐԾՈՂ
ՄԱՆԿԱԲԱՐՁԱԳԻՆԵԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԿԱԲԻՆԵՏՆԵՐԸ
«ՎԱՆԱՁՈՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 11-րդ մասի 3-րդ կետով, ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մարտի 24-ի թիվ 285-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի պահանջների՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. Մինչև ս/թ հունվարի 31-ը կազմակերպել «Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկա», «Գուգարք» կենտրոնական պոլիկլինիկա», «Վանաձորի թիվ 3 պոլիկլինիկա» և «Վանաձորի թիվ 5 պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ներում գործող մանկաբարձագինեկոլոգիական կաբինետների տեղափոխումը «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ:

2. Որոշման 1-ին կետում նշված գործընթացն իրականացնելիս ապահովել նշված կաբինետներում առկա գույքի, բժշկական պարագաների, ինչպես նաև բժիշկների և միջին բուժանձնակազմի հաստիքների տեղափոխումը «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

3. «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենին՝

«Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի հաստիքացուցակում կատարել լրացումներ՝ հաշվի առնելով պոլիկլինիկաներից մանկաբարձագինեկոլոգիական կաբինետների բուժանձնակազմի տեղափոխման գործընթացը:

4. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Ա.Մխիթարյանի վրա:

Invalid signature

X

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2019թ. հունվարի 24
ք.Վանաձոր